

ԴՈՒՐԵԱՆ ԱՌ ՂԱԶԻԿԵԱՆ

Դպրեվանք
Ա Ր Մ Ա Շ Ո ՒԱրժանապատիւ
Հ. Արսէն Վրդ. Ղազիկեան
ի վեցետիկ

Սերելի եւ Ազնիւ Վարդապետ

Սերուն նամակը մեծ հաճոյքով կարդացի, ու ըսի ինքնիրեն. Պզտիկն հիմա ամէն կերպով մեծցած է, հանճարով եւ շնորհներով. թերեւս ամէն բան փոփոխութիւն կրած ըլլայ իր մէջը տարիներու ընթացքով, բայց բան մը մնացեր է նոյն. մանկութեան անկեղծաւոր արտայայտումի բո՛ւն չեղաւ. ձայնը պզտիկիս, որ յուզեց զիս. ու թաց աչքերով միտքս բերի զինքը ծալլուած նստած՝ դասարանի մը մերկ գետինին վրայ՝ լուրջ մտամփոփումով:

Սերելի Վարդապետս, դատելով զիս անխորհրդատիպ լուսանկարի մը վրայէն, փոխուած կ'զտնես զիս, եւ իրաւունք ունիս. բայց ես ալ կուզեմ հաւաստել միայն՝ թէ սիրտս նոյն կ'մնայ միշտ համակրանքիդ եւ սիրոյդ հանդէպ: Ծաղկեալ թելերուս համար ո՛ւշ է մաղթանքդ. տարիներու խաղը ուրիշ ի՞նչ կերպով կրնայ իրադործուիլ:

Ես ալ փափաքեցայ զքեզ գիտել լուսանկարի մը վրայէն գոնէ, բայց չունիմ. կղզաս անշուշտ որ հայրական կարօտի մը ազդեցութիւն կ'խօսիմ. հաստ մը զրկէ ինծի. ո՞վ գիտէ, կարելի պիտի ըլլա՞յ զտնել երջանիկ պատահութիւն մը որ զմեզ հանդիպցնէ իրարու:

Մի՛ դադրեցնէր ձայնդ ալ, որ այնքան անուշ հնչեց վանքիդ խորերէն մինչեւ խորերը սրտիս:

Օրհնութեամբ համբուրելով ճակտեղ

մնամ

Աղօթակից

Եղիշէ Ե. ԴՈՒՐԵԱՆ

25 Մարտ, 1900

Արմաշ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱՐՐԱՀԱՄԵԱՆ ԱՇՈՏ Գ. - Համառոտ ուղեւորութիւն հայ զաւթաւորների պատմութեան, Ա. Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 486:

ԱՏՐՊԵՏ (Մուրալաջեան Սարգիս) - Երկեր: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 436:

ԱՐՄԷՆ ՄԿՐՏԻՉ. - Պատուիրեցին յանձնել ձեզ (պատմութեան): Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 446:

ԲԱՐԱՅԵԱՆ ԼԵՆԻՆ Յ. - Հայաստանի սոցիալ-անտեսական եւ քաղաքական պատմութիւնը ԺԳ-ԺԴ. զարեւում: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 602:

ԲԱՅՈՒՆՅԱՆ ԱՅՍԵԼ. - Երկեր երկու հատորով: Հատոր Երկրորդ: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 622:

ԳՈՒԼԱԿԵԱՆ ԱՐՄԷՆ. - Պիեսներ (Արշալոյսին, Յասում, Օրեր մարդիկ անմոռաց, Անհանգիստ մարդիկ): Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 411:

ԴԱՐԵԱՆ ԱՐՄԷՆ. - Կարօտ եւ կեանք (պատմութեան): Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 204:

ԼԵՕ. - Անի (Տպաւորութիւններ, Յիշատակներ, Անցածն ու Մնացածը): Երեւան, Պետ. Հմ. Հրատ. 1963, էջ 384:

ԿԱՊՈՒՏԻՅԱՆ ՍԻՂՎԱ. - Քարտանները դեռ քայլում են: Երեւան, «Հայաստան» Հրատ. 1964, էջ 531:

ՀԵԳԵԼ ԳԵՈՐԳ ՎԻԼՀ. ՖՐԻԴ. - Փիլիսոփայութեան ներածութիւն (փիլիսոփայական պրոպեդեալիստիկա): Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 291:

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԵԱՆ ԿԱՐԵՆ Վ. - Անահիտ դիցունհու պաշտամունքը: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1963, էջ 162:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Վ. Ա. - Ղերմի հայկական զաւթութիւն պատմութիւն: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 427:

ՅԱԿՈԲԵԱՆ ՍՈՒՐԵՆ Ե. - Հայ գեղարվեստական պատմութիւն (Զարգացած ֆէոդալիզմի դարաշրջան): Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 291:

ՅԱԿՈԲԵԱՆ ՎԱԶԳԷՆ. - Կանոնադրեր Հայոց Ա: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ LXXIX+742:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ն. Հ. - Ազգային-ազատագրական պայքարը Իրաւում: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 227:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ. - Երկերի ժողովածու. հատոր Ա. (Բանաստեղծութիւններ, Սեփականութիւններ, Թարգմանութիւններ): Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 424:

ՇԵՔՍՊԻՐ ՎԻԼԻԱՄ. - Բնախը երկեր, երկու հատորով: Հատոր Ա. կը պարունակէ՝ Համլետ, Օ-

թելոյ, Մակբեթ, Վենետիկի վաճառականը, Լիր արքայ, Ռոմէոյ եւ Ջուլիետ (առաջին չորսը թարգմանեց Յովհ. Մասեհեան, վերջին երկուքը՝ Խ. Դաշտենց): Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 906:

ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. - Քնար Հայաստանի. զերք երկրորդ: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 359:

ՈՐԲԵՐԵԱՆ ՌՈՒԲԷՆ. - Երկեր (Կազմեց եւ առաջարկեց զրեց Եղիշէ Պետրոսեան): Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 196:

ՉԱԼՈՅԵԱՆ ՎԱԶԳԷՆ Կ. - Հայկական ռենեսանս: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 352:

ՊԱՏԿԱՆԵԱՆ ՌԱՓԱՅԷԼ. - Երկերի ժողովածու, հատոր Բ: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 383:

ՊԱՐՈՆԵԱՆ ՅԱԿՈԲ. - Երկերի ժողովածու. հատոր Երկրորդ (Ազգային ջոկեր, Մանթապարութիւններ, Բառարաններ): Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 408:

ՊԱՐՈՆԵԱՆ ՅԱԿՈԲ. - Երկերի ժողովածու. հատոր Երկրորդ (Մեծապատիւ մուրացիկները, Պոյոտ մը Պոյոտ թաղերու մէջ, Քաղաքավարութեան վնասները, Տարբերակներ, Մանթապարութիւններ, Բառարաններ): Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 423:

ՊԱՐՈՆԵԱՆ ՅԱԿՈԲ. - Անյայտ էջեր եւ ափորիզմներ (կազմեց՝ Գ. Ա. Մաղոյեան): Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 219 (փոքրադիր):

ՊՈՇԵԱՆ ՊԵՐՃ. - Երկերի ժողովածու, հատոր Զ: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 722:

ՍԱՐԻՆԵԱՆ ՍԵՐԳԷՅ Ն. - Գրական գիտողութիւններ: Երեւան, ՀՊՀրատ. 1964, էջ 299:

ՍԵԼԱՆ ԳԵՂԱՄ. - Ծիծեռնակները ցածին անցան: Երեւան, ՀՊՀրատ. 1964, էջ 409:

ՍՏԵՓԱՆԵԱՆ ԳԱՌԻԿ. - Յակոբ Պարոնեան: Կեանք եւ հրապարակախօսութիւն: Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 275:

ՎԵՐՅԵԼ ՖՐԱՆՅ. - Մուսա լեռան քառասուն օրը (Գերմաներէնից թրգմ. Պարոյր Միքայէլեան): Երեւան, ՀՊՀրատ. 1964, էջ 888:

ՓՈՐԹՐԻ ԷԼԻՆՐԻ Հ. - Փոլիանա կամ գոհունակութեան խաղը: Յրաններէնէ թրգմ. Արմենուհի Տփ. Ե. Խոյէր: Իսթանպուլ, տպ. Հերմոն, 1962, էջ 230:

ՔՈԶԱՐ ՀՐԱԶԵԱՆ. - Երկերի ժողովածու. հատոր Առաջին: Երեւան, ՀՊՀրատ. 1964, էջ 575:

* * * (ԽՄԲ. ՄԱՐՄԷՆ. - Աստուծան Ա. Ա., Իմ-նիկեան Ա. Մ., Յովհան Գ. Ն., Զրբաշեան Էդ. Մ., Սարգսեան Խ. Ս., Սարիմեան Ս. Ն.) - Հայ նոր գրականութեան պատմութիւն, հատոր Երրորդ: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրատ. 1964, էջ 758: